

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 17/3

5 մայիսի 2015 թ.

Քննարկվեց «Իմնո ժեստիոն» ՓԲԸ տնօրենի 15.04.2015 թ-ի գրությամբ բերված գանգատը ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետի 08.04.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 282309 որոշման դեմ:

«Իմնո ժեստիոն» ՓԲԸ տնօրենի գանգատում բերված փաստարկները.

Բանկային տոկոսների վերահաշվարկման հետևանքով տոկոսային եկամուտ առաջանալու կապակցությամբ «Իմնո ժեստիոն» ՓԲԸ-ն 24.03.2015 թ-ին Կենտրոնի հարկային տեսչություն ներկայացրել է 2013 թ-ի հաշվետու տարվա շահութահարկի ճշգրտված հաշվարկ:

Ընկերությունը 26.03.2015 թ-ին վճարել է 576.000 դրամ կանխավճար սպասելով հաշվարկված տույժերի գումարների վերջնական ճշտման համար Կենտրոնի հարկային տեսչության հետ պարտք ու պահանջի վերաբերյալ ակտի կազմմանը:

30.03.2015 թ-ին Կենտրոնի հարկային տեսչության սպասարկման սրահի աշխատակցից ստանալով պարտք ու պահանջի վերաբերյալ համակարգչային փաստաթուղթը, որի մեջ նշված էր 66.254 դրամ հաշվարկված տույժ, ընկերությունը վճարել է 31.03.2015 թ-ին:

05.04.2015 թ-ին փոստային առաքմամբ Կենտրոն հարկային տեսչությունից ստացվել է ծանուցում, որի համաձայն 30.03.2015 թ-ի դրությամբ հաշվարկված տույժի գծով պարտքը կազմում է 115.266 դրամ, ինչպես նաև առարկություններ ունենալու դեպքում 10 օրյա ժամկետում ներկայանալ հարկային տեսչություն:

Նույն ամսաթվի դրությամբ տարբեր գումարի պարտք ունենալու հետևանքով անմիջապես գանգատաբերը ներկայացել է հարկային տեսչության և ընկերության քարտավարի հետ ճշտել է հանգամանքը: Քարտավարի մեկնաբանությամբ տեղի է ունեցել ծրագրային սխալ:

07.04.2015 թ-ին ընկերությունը վճարել է տույժի գծով ճշտված 49.012 դրամ տարբերությունը, իսկ 10.04.2014 թ-ին՝ 2014 թ-ի 1-ին եռամսյակի շահութահարկի կանխավճարի տարբերությունը:

13.04.2015 թ-ին Կենտրոնի հարկային տեսչությունից փոստային առաքմամբ ստացվել է 20.000 դրամի չափով վարչական տուգանք նշանակելու մասին ապրիլի 8-ին կայացված որոշումը, որը կայացվել է 115.266 դրամի պարտքը չվճարելու համար:

Միթե հարկային տեսչության համապատասխան աշխատակիցն ապրիլի 8-ին որոշում կայացնելիս չի ստուգել այդ օրվա դրությամբ պարտքը չսպասելով նաև իրենց կողմից առաջարկված 10 օրը լրանալը:

Ելնելով վերոգրյալից՝ գանգատաբերը խնդրում է անվավեր ճանաչել վերը նշված վարչական իրավախախտման վերաբերյալ որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետի կողմից 08.04.2015 թ-ին կայացվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 282309 որոշումը, որով «Իմնո Ժեստիոն» ՓԲԸ (այսուհետ նաև ընկերություն) տնօրենը հարկերը սահմանված ժամկետում չվճարելու համար «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 170.3 հոդվածի հատկանիշներով ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ գումարով 20.000 դրամ:

Այսպես, 24.03.2015 թ-ին «Իմնո Ժեստիոն» ՓԲԸ կողմից ներկայացվել է շահութահարկի ճշգրտված հաշվարկ, որով ընկերությունը ճշգրտել է 2013 թ-ի շահութահարկի գծով պարտավորությունները: Ճշգրտման արդյունքում շահութահարկի գծով առաջացել են լրացուցիչ պարտավորություններ (հարկ և կանխավճարներ) գումարով 576.000 դրամ, որն ընկերության կողմից վճարվել է 26.03.2015 թ-ին:

Տվյալ դեպքում, 2013 թ-ի համար շահութահարկի ճշգրտված հաշվարկ ներկայացնելու հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ ընկերության կողմից բանկից ստացված վարկի տոկոսները վերջինիս կողմից զիջվել են: Սակայն այդ մասին ընկերությունը տեղեկացել է միայն 2015 թ-ի փետրվար ամսին:

ՀՀ ՖՆ Կենտրոնի հարկային տեսչության կողմից գանգատաբերին տրամադրվել է տեղեկանք, որի համաձայն 30.03.2015 թ-ի դրությամբ ընկերության շահութահարկի տույժի գծով պարտավորությունը կազմում է 66.254 դրամ: Նշված գումարն ընկերության կողմից վճարվել է հաջորդ օրը՝ 31.03.2015 թ-ին: Այնուհետև 05.04.2015 թ-ին Կենտրոնի հարկային տեսչությունից գանգատաբերը ստացել է ծանուցում, որի համաձայն 30.03.2015 թ-ի դրությամբ ընկերության շահութահարկի տույժի գծով պարտքը կազմում է 115.266 դրամ: Նշված հանգամանքը պարզաբանելու համար ընկերության տնօրենն այցելել է հարկային տեսչություն: Ընկերության անձնական հաշվի քարտը վարող մասնագետի հետ հանդիպման արդյունքում պարզվել է, որ 30.03.2015 թ-ի դրությամբ շահութահարկի տույժի գծով տարբեր գումարներ առաջադրված լինելու հանգամանքը պայմանավորված է եղել ծրագրային սխալով: 07.04.2015 թ-ին ընկերությունը վճարել է տույժի գծով ճշտված 49.012 դրամ տարբերության գումարը:

Հարկ է նշել, որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով նախատեսված խախտման առկայության համար անհրաժեշտ է, որ խախտում կատարած անձը զանցանքը կատարած լինի մեղավորությամբ, այսինքն՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում անհրաժեշտ է պարզել խախտումը կատարած անձի վարքագծում մեղքի առկայության փաստը:

Վերոգրյալ փաստական հանգամանքների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը եկավ եզրակացության, որ քննարկվող դեպքում ընկերության տնօրենի վարքագծում բացակայում է մեղքի առկայության փաստը, քանի որ վարկի մարման տոկոսները բանկի կողմից զիջվելու մասին ընկերությունը տեղեկացել է միայն սույն թվականի փետրվար ամսին: Այսինքն, «Վարչական իրավախախտումների

վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 170.3 հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցը տվյալ դեպքում կիրառելի չէ, քանի որ զանցակազմը լիարժեք չէ, արարքի սուբյեկտիվ կողմի՝ մեղքի բացակայության պատճառով: Բացի այդ, վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 282309 որոշումը կայացվելու օրվա դրությամբ վերոգրյալ պարտավորություններն ընկերության կողմից արդեն իսկ կատարված են եղել:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Բեկանել ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետի 08.04.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 282309 որոշումը, իսկ գործը՝ կարճել:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ